

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՌՅՀԳ-ՌՅՀԴ

ՀԱՏՈՐ

ՁԱ

1924

ՑՈՒԼԻՍ

ԹԻԻ 7

Ս. ՂԱԶԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՍԵՐԻՈՍԻ ԵՄԵՍԱՑԻՈՑ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱԾՈՑ

(յանուն Կիւրոյ Աղեքսանդրացւոյ)

◁○▷

(Շար. տես Բազմավէպ 1924 էջ 66)

ԵՒՍԵՐԻՈՍԻ մեկնութեան լիզուական տեսակէտն ալ մեզ շահագրգռուելու առիթ կու տայ, ամենասերտ նմանութիւն մը ցուցնելով Եզնկայ Եղծ Աղանդոցի ոսկեշար հատորիկին հետ. մինչեւ իսկ սկիզբները նոյն հեղինակի գործն համարելու փորձութեան մղեց, երբ չունէինք առձեռն՝ Եւսերիոսի ըլլալու ապացոյցները:

Երկուքին ալ բացատրութեան ոճերը, բառերը, զարձուածները նմանութիւն կը ցուցնեն, մասնաւորապէս կան ինչ ինչ տեղեր՝ ուր յայտնապէս Եզնիկ իր գրերոյկին մէջ ընդլայնած և բացատրած է Եւսերիոսի սեղմ տճով բնութեան երևոյթներու վրայ զրաժները: Այսպէս.

Եւսերիոս, էջ 195. «Այլ և մարդկան մի մարմին է, և ամենայն բանջարը նոյն

են, բայց բանջարքն այլ և այլ զօրութիւն ունին զի մին կակղացուցանէ, և միւսն խտացուցանէ, մին բանայ, միւսն կնքէ, մին միս ածէ և միւսն ևս հալէ: Եւ ոչ զի միմեանցն հակառակ են մեզ չիցեն պիտանացու, յորժամ ի դարման մարմնոյ մատուցանիցեմք, զի կէսքն զփուտն հարկանեն, և կէսքն զմիսն ածեն, և ոչ մին զամենայն ցաւս բժշկէ»:

Լսենք նաև Եզնիկը՝ որ Բիչ Թէ շատ նոյն բանը կ'ըսէ, աւելցնելով միայն բանջարներուն անունները:

Լզնիկ (էջ 66. տպ. վեհնետ, 1826). «Նոյնպէս և ի բանջարս է ինչ որ առանձինն սատակիչ է և խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէս պէս ցաւոց լինի: Զմանրագորն եթէ ոք լուկ ուտիցէ սա-

տակիչ է, և խառնեալ ընդ այլ արմատս քնածու լինի քնահատաց»:

«Եւ զհազար՝ եթէ ի տօթ ժամանակի ուտիցէ որ, քանզի զովացուցիչ է, զտապս ի փորոյն փարատէ, և եթէ ի հով ժամանակի ուտիցէ որ փնասէ, ...: Եւ կանեփուկն թուփ ինչ է, որոյ սերմն նորա զեղ է, և նոյն դարձեալ կանեցուցիչ ցանկութեան ...: Եւ կաղանջանան ազգ ինչ՝ առանձինն սպանող է, և խառնեալ ընդ այլ զեղոյ՝ մաղձադեղ է բուժիչ ի մահուանն»:

Երկու հեղինակներու էջերուն մէջ ստեպ կը հանդիպինք այսպիսի նմանութիւններու, մանաւանդ երկուերին ալ ջատագովական ուղղութիւնը ստեպ ստեպ նոյնգուռակ փաստերու կը յանդիպէ: Երկուերէն ալ էջեր պէտք է կարդալ, մըրձնելու անոնց իրարու մէջ ունեցած սերտ աղերսը, կարծես նոյն բանն է որ կը կարդաս միոյն կամ միւսին մէջ. այսպէս Եզնիկի 46 էջերը և Եւսեբիոսի 150 էջերը մին միւսին հայելացումն է ոճի, լեզուի և իմաստի տեսակէտով: Այդ էջերէն ցայտուն կտոր մ'ալ կը զննմ խօսքս հաստատուելու համար, ընթերցողներուն թողլով մանրամասն բաղդատութիւնը:

Եւսեբ. «Փանգի և երկաթ ի գործ հողագործութեան պիտանացու է, այլ ի սպանութեան կարի իսկ անպիտան»: (էջ 195):

Եզնիկն ալ նոյն բանն ունի (էջ 39). «Որպէս և երկաթ մերթ ի բարիս պաշտի, և մերթ ի չար. զի եթէ խոփ և զերանդի և մանգաղ որ գործիցէ՝ ի բարւոյն իրս պաշտեցաւ, ապա եթէ սուտեւ և գեղարդն և սլաց, և այլ ինչ զէն որ փնասակար մարդկան է, գործ չարութեան գործէ»:

Չուզելով երկարօրէն բաղդատութիւններ շարել՝ կ'անցնիմ համառօտակի գծելու Եւսեբիոսի կեանքին զլիսաւոր մասերը, մեր զրոյկին ընթերցողներու հետ ծանօթացնելու համար յարգելի հեղինակը:

Թէ՛ Անտիոք և թէ՛ Ալեքսանդրիա եթէ արևելեան Եկեղեցիներուն գրական աչքերն էին, ոչինչ նուազ խորագնին հայեացք մ'ուռնեցած է և Եղեսիա աստուածային գիտութեանց ամենախոր ալերներուն մէջ:

Եփրատի յորդահոս ափերուն մօտ՝ միշտ յորդահոս միտք մ'ըլլալու չընաղ տպաւորութենէն մղուած՝ անոր վարդապետները կերտեցին անգիւտ երկեր՝ տիեզերական հոչակ ստանալով:

Այդ բարերար ափերուն մօտ Եւսեբիոս կրցաւ ժիր մեղուի պէս ծծել իրեն ուսուցիչներուն հանճարին նեկտարը, և իր կարգին հոչակուել իբր արգաւանդ միտք և գեղեցկագիր զրիչ:

Դժբախտարար ժամանակը և մանաւանդ պատմութիւնը ժլատ եղած է անոր կենսագրական մանրամասն գծերը տալու, հակառակ իւր դարուն վայելած այնքան յարգանքին և հիացման՝ իբր մեծ հանճար մը:

Արդի գիտնականաց ընդհանուր կարծիքը զայն կը դնէ շուրջ Գ. դարու վերջերը և կամ Դ.ի սկիզբները, Եզնիկացի բարձր ընտանիքէ մը սերած:

Գէորգ Լաուդիկեցին (ԿՃ 360) կաթմբէր բարեկամ և սքանչացող Եւսեբիոսի վրայ, զրած էր մեկնիչիս կենսագրութիւնը, սակայն իսպառ կորսուած է՝ առանց հետք մը թողլու ու է՛ ազգի մասնագրութեան մէջ. ո՞րքիտէ, ինչ որ օտարին քով չէ՛ կարելի գտնել՝ այս անգամ ալ հայը լոյս մը սփռէ թերեւս, օր մը մէկ կամ միւս ձեռագրատան անկիւնէն հաննելով այդ պատմութիւնն ալ՝ որ մեծ յեղաշրջութիւն պիտի բերէ Դ. դարու եկեղեցական պատմութեան շուրջ:

Սովորաւոր և Սոգոմնոս քանի մը հարկանցի ակնարկներ կու տան Եւսեբիոսի նկատմամբ. նոյնպէս դարուն կրօնական շատագովութեանց մէջ երբեք անցողակի պատմական դէպքեր յիշուած են անոր կեանքէն: Իսկ Ս. Հերոնիմոս (Յաղազ Երեւելի արանց գրքին մէջ, Գլ. ԳԱ) և Եպէտ Եղու Ասասմանիի քով, անոր գրութիւնները կը ցանկեն և գովեստներ կը հիւսեն ոճին բարձրութեան մասին:

Գրեթէ որոշ է որ Եւսեբիոս իբր ուսանող աշակերտ, մեծ պատմաբան կենսաբացումն հանճարին շողերով պնագարդուած, հաւատարիմ կերպով օրինակեց և

խրացուց անուանակցին բարձր գիտութիւնը և հմտութիւնը ամէն բանի մէջ. նա մանաւանդ ճարտասանական միկնոդական արուեստին մէջ քիչեր ունեցաւ իւր բարձրութեան հասնող:

Եթէ կենսաբացւոյն խորագնին և սուր միտքը ժառանգեց՝ ամէն բանի մէջ հետաքրքրի՝ խորը թափանցելու նոյն իսկ ուր մարդկային միտքը հարկ է որ տեղի տայ նիւթին անըմբռնելութեան, հոն ալ անխոհմաբար մխրճեցաւ. սակայն հաւատարիմ և իղճամիտ հետեող մ'ալ եղաւ, ինչպէս ըսինք առաջները, Լուկիանոս Վլային իր միկնոդական ոճին ընտրութեան մէջ, Լուկիանոսի դպրոցին խորադրող՝ ազդեցութիւնը՝ Ս. Գիրքը բառացի մեկնելով, մեր ժամանակի ըրած բազմատութիւնները քիչ թէ շատ յայտնի կը ցուցնեն:

Գ. դարու կրօնական փոթորկալից խընդիրները Եւսեբիոսի վարքին մէջ նոր տեսարան մը բացին և այդ կուռի ամպերուն տակ իւր աստղը ցմիշտ ծածկուեցաւ աւօթի ջողով մոլորեալներու շարքին մէջ:

Եղեախան այդ խնդիրներուն մէջ լույս չէզոք դիտողմը չեղաւ, վարդապետ և աշակերտ բռնկեցան յունական լուցկիով, և ահա Նոր-Աղեքսանդրեան Գալոցը և Անտիոքեանը ասպարէզ կ'իջնեն: Չարհոգի Ասորին կարծես իրեն զրութիւն ըրած էր մերժելու զայն՝ ինչ որ Աղեքսանդրիոյ դպրոցը կը պաշտպանէր, և կրնանք ապահով ըլլալ որ աւելի դպրոցի, աթոռներու և նախանձի հարց էր՝ քան զուտ կրօնական (Պարտէնէզէէր, Հատ. Բ խաւ. քարգմ. էջ. 2. հմ. 3):

Եմեսացին շրջած էր Անտիոք, Աղեքսանդրիա, և ապա հաստատուած Անտիոք. իւր գիտական ճանապարհորդութեան միջոց անշուշտ փոխանակած և ընդունած էր շատ մը նոր նոր գաղափարներ. ըստ իս Արիոսի հետ, ղեռ քահանայ յԱղեքսանդրիա, խօսած էր և սերտ բարեկամութիւն ալ հաստատուած:

Միշտ մանրախոյզ միտք, միշտ անհանդարտ երիտասարդ հոգի, յամառ ասորի,

այդ կրօնական հրատապ կռիւներու մէջ բուռն կերպով նետուեցաւ, և աւելի արեան քան մտքին հետեւելով, և թերեւ կեսաւրացւոյն մոգիչ լեզուէն թուռաբորուելով, գլորեցան արիտեսանց կողմ չափաւորեանութեան խմբին մէջ, որոնք կիսաբիւրեան անունն առին, և իբր իւր պաշտպանած դերին շնորմ ախոյեան ամբաւ գրութիւններ հրապարակ հանեց, որոնց լուծ թուոյն վրայ Ս. Հերոնիմոս զարմացած «Անհամար» կը կոչէ:

Արիոսեան մատենագրութեան ջնջման հեղեղին հետ Եւսեբիոսի գրութիւններն ալ չըացան. միայն մէկ երկու ճառեր և մեկ նոթիւններ առ այժմ ձեռքերնիս ունինք, մնացածները եթէ կան՝ ապագան պիտի պարզէ:

Երբ Աթանաս հեռացուած էր իւր աթոռէն, Անտիոքի 341 ի ժողովը, գլխաւորիտ միայն արժանի կը համարէ ճշմարտութեան մեծ ախոյեանին տեղն անցնելու. սակայն մեր մեկնիչը հոս իմաստուն զբոսնուելով մերժեց յաջորդել անոր՝ որ ժողովրդեան սրտին մէջ իբր Աստուած կը պաշտուէր:

Այսքան հանճար մը սոսկ քահանայ վիճակի մէջ դժուար էր որ կարողար մնալ. բաւական ժամանակ մը վերջ իրեն յանձնեցին Եմես քաղաքին հովուութիւնը Փիւնիկիոյ մէջ, ուր երկար ժամանակ իբր արքիոսական մեծ դիմադրութիւն ունեցաւ, մինչև որ կրցաւ այլոց օգնութեամբ յաղթանակել:

Մեծ ազդեցութիւն և շնորհ շահած էր Եւսեբիոս Կոստաս Կայսեր մօտ, անոր պատեհական և քաղաքական ամէն ձեռնարկութեանց գործակից եղաւ, մինչև իսկ Կայսրն ուզեց իւր հետ տանիլ 338ին Պարսից պատերազմի ժամանակ:

Այդ թուականէն մինչև իւր մահը պատմութիւնը ոչ ինչ յայտնած է: Անտիոքի մէջ 359ին մեռաւ, որովհետեւ 360ին Սիլվիկիոյ ժողովը արդէն Պոդոս անուն եպիսկոպոս մը կը ճանչնայ Եմես քաղաքին:

Որքան որ Եւսեբիոս Մակեդոնեանն էրուն յանգած էր վերջ ի վերջոյ, սակայն

մեր մեկնութեան մէջ ոչ մէկ մուրական զազափարի գոյութիւնը քիչ մը զարմանալի է, և մեզ կարծել կու տայ որ այդ մեկնութիւնը հաւանաբար կատարած ըլլայ զեռ կրօնական խնդիրները չսկսած, այն է 320էն առաջ:

Յարկ կատարած փոքրիկ հետազոտութիւններուն իբր խորհրդաւոր գործածած եմ հետեւեալ գրքերը. — Յունական Հայրախօսութիւն, հտ. ՀԳ. էջ 463. — *Fessler-Jungmann, Institutiones patrologiae*, Inspruk Հտ. Բ. ա մասն 3-4. Batiffol — *La litterature grecque — Բարիզ* 1898, էջ 278. *Duchesne — Histoire ancienne de l'Eglise — Բարիզ* 1908 հատ. Բ, էջ 196. *Bardenheuer — Patrologia — Խոպ.* Թարգմ. հտ. Բ, էջ 9-10. Հոովժ. *Revue Biblique — Սպրինգ* 1912, էջ 294-295. *Dictionnaire de Théologie Catholique — A. Vacant et Mangenot — հատ. Ե. սինակ* 1537-1539 — Եւ այլ զանազան փոքրիկ հրատարակութիւններ:

Մինչև հիմա մեր ըսածը գրական գանձի մը յայտնութեան մասին էր, որուն հոսը միայն Եւրոպացիին առած է շղթաներու մէջ, բայց տեսքը չի գիտեր: Սքանչելի գանձ մ'է որ հայ մատենագրութիւնը ի լոյս բերած է դարեւու մթութենէն, ասով ուրախ ենք ցուցնելու թէ հայը շատ վաղուց ի վեր — մինչ Եւրոպացիին զեռ վայրենի էր — գրական բարձր զազափարով և զարգացմամբ օժտուած էր. լայնամիտ ըմբռնումով նոյն իսկ մուրեհալին գեղեցիկն ալ լաւն ալ ընդունելու, սրբելով և մերժելով փտածը, թոյնը: Այսօր անգամ մ'ալ մեր հրատարակութեամբ կ'ուզենք գիտական աշխարհի ցուցնել, թէ հայ լեզուն, հայ մատենագրութիւնը և ամբողջ հայութիւնը ոչ թէ իրենց ցաւերուն համար կարեկցութեան արժանի՝ այլ իրենց բարձր յատկութեանց և արժանեաց համար իրաւունք ունին ապրիլ ամենազարգացեալ ազգերու շարքին մէջ:

Հ. Վ. ՅԱԶԱՆԵՏԵԱՆ

ՍՆԱՄԷՃ “ԳՐԱԿԱՆ ՀԱՆԵՆՈՒԿՆԵՐ”, ՀՈՐՈՅԻ

Ամեն մարդ իրատեսք ունի քննարան լինելու. Հորոյին՝ այդ իրատեսքը ոչ որ կրնայ ժխտել. բայց ամենուն տրուած չէ ամեն բանի հաստատարպես խելք հասցնել և ողջմտութեամբ դատել և ըստ այնմ կշարատ կարծիքն յայտնել, ուսուցանել:

Երեւելի հանձարներ, գիտենք, յարգեր են խաւարնագոնից դիտողութիւնները և դատողութիւնները՝ երբ նկատուր են որ խօսողն մասնագետ է և հմուտ իր արունստին. բայց երբ մէկն համարէ է և բերուս, ըստ խորեկացոյն, սարկելէն յառաջ կամի վարդապետ դառնալ, այնպիսին ամեն մասնակ ծիծաղելի և արհամարհելի եղած է: Մենք կ'ուզենք յարգել Հորոյ իբրեւ քննադատ մը հայերէն լեզուի, բայց ո'չ կ'ուզենք վեր. մենք չենք ասողը, այլ սաստողն Ապրիլն է, մեծ պատկերասեր:

Մեր նախնեաց հանդեպ, մանաւանդ ոսկեդարուն հանձարներուն առջև, որ մեր գրականութեան հսկայ է. անմահ կորողներն են, ոչ միայն մենք պատկասելով կը խոնարհինք, և երբեմնի իմաստասիրաց աշակերտներն պէս անոնց բերութեանց նմանող և հետեող լինել պարծանք կը հաւարինք, այլ և նարդպական գիտնականներ, որոնք — պէտք է խոստովանիլ — յաղդեր են լեզուարանական ձիւղին մէջ երբեմն բան զմեզ գերազանցել՝ միշտ հիացմունքով արտայայտուր են մեր հեղինակներն լեզուի, շարադրութեան մասին:

Նորա ուսումնասիրել են բազմակողմանի կերպով մեր մատենագրութիւնը, մեր քերականութիւնը, մեր յատկարանութիւնները (*idiotisme*) և կրցիւր են մեկնութիւններով հանգստացնել իրենց ուսումնական խիղճը,